ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

««ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ, «ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԹԵՎԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՕՐԵՆՔ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԵՎ «ՆՈՐ ՈՒԺ» ՌԵՖՈՐՄԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 259-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՄԻԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՎ «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ՝ ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, նշված գործով քննության առնելով «Բարգավաճ Հայաստան» կուսակցության՝ սույն միավորված գործով ապացույց պահանջելու և փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջնորդությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Սահմանադրական դատարանի վարույթում է գտնվում ««Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի, «Միասնության Թևեր» կուսակցության, «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցության, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, «Հանուն Հանրապետության Ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակ-ցության, «Հայաստան» կուսակցությունների դաշինքի և «Նոր Ուժ» ռեֆորմիստական կուսակցության դիմումների հիման վրա՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 259-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» միավորված գործը:

2. «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը միջնորդել է սույն միավորված գործով պահանջել յուրաքանչյուր տարածքային ընտրական հանձնաժողովից 2026 թվականի հունիսի 7-ին տեղի ունեցած Ազգային ժողովի հերթական ընտրությունների համար տպագրված քվեարկության ծրարի 5 օրինակ, ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկի օրինակ, ինչպես նաև 2026 թվականի հունիսի 7-ին տեղի ունեցած Ազգային ժողովի հերթական ընտրությունների ժամանակ օգտագործված քվեարկության ծրարների թափանցիկությունը պարզելու նպատակով նշանակել փորձաքննություն՝ պատճառաբանելով, որ քվեարկության ծրարի՝ անթափանց թղթից պատրաստված լինելու պահանջը պայմանավորված է մի կողմից՝ ընտրությունների գաղտնիության սկզբունքն ապահովելու, մյուս կողմից՝ քվեարկությունների նկատմամբ վերահսկողությունը բացառելու անհրաժեշտությամբ, մինչդեռ 2026 թվականի հունիսի 7-ին՝ ընտրությունների անցկացման օրը, բազմաթիվ են եղել ԶԼՄ-ների կողմից հրապարակումներն առ այն, որ քվեարկության ծրարները թափանցիկ են, պատրաստված թափանցիկ նյութից, ինչի արդյունքում խախտվում է քվեարկության գաղտնիությունը՝ քվեարկությունները դարձնելով տեսանելի:

Դիմողի պնդմամբ՝ նման փաստի հաստատման դեպքում խախտված է լինելու ընտրությունների կարևոր ու պարտադիր սկզբունքներից մեկը՝ գաղտնիության սկզբունքը, ինչն էլ ուղղակիորեն և էականորեն կարող է ազդած լինել ընտրությունների արդյունքների վրա:

3. Քննության առարկա դարձնելով «Բարգավաճ Հայաստան» կուսակցության միջնորդությունը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

««Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի, «Միասնության Թևեր» կուսակցության, «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցության, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, «Հանուն Հանրապետության Ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցության, «Հայաստան» կուսակցությունների դաշինքի և «Նոր Ուժ» ռեֆորմիստական կուսակցության դիմումների հիման վրա՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 14-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի

հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 259-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» միավորված գործով «Բարգավաճ Հայաստան» կուսակցության՝ ապացույց պահանջելու և փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջնորդությունը բավարարել մասնակի:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովից պահանջել հնարավորինս սեղմ ժամկետում Սահմանադրական դատարան ներկայացնել յուրաքանչյուր տարածքային ընտրական հանձնաժողովից 2026 թվականի հունիսի 7-ին տեղի ունեցած Ազգային ժողովի հերթական ընտրությունների համար տպագրված քվեարկության ծրարի 5 օրինակ, ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկի օրինակ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

29 հունիսի 2026 թվականի
ՍԴԱՈ-140